Բարև՛, Սայա՛դ,

Ես Նինան եմ՝ 17 տարեկան: Չգիտեմ՝ քանի Նինա ես ճանաչում, քանի անգամ ես առհասարակ այս անունը լսել, բայց վստահ եմ, որ առաջին Նինան եմ, որը հայ է ու քեզ նամակ է գրում:

Ես միշտ եղել եմ այն համոզմունքին, որ խաղաղությունը ստեղծում են ժողովուրդները: Խնդրում եմ ուշադրությու՛ն դարձրու, ժողովուրդը չէ, ժողովուրդները: Ու Հայաստանի, Ադրբեջանի հարաբերություններն ու Ղարաբաղի հարցն էլ պետք է մենք լուծենք: Մենքը դա ես եմ, դու, իմ փոքր եղբայրը, որը դեռ բանակ չի գնացել, քո ընկերները, որ բանակում արդեն ծառայել են ու գուցե մեր ծանոթները կամ հարազատները, իմ ու քո, որ արդեն զոհվել են: Ես վստահ եմ, ավելի քան վստահ եմ, որ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները արդեն շատ են լացել ու արցունք թափել, շատ–շատ. հերի՛ք է:

Գիտե՞ս, երբ ապրիլյան քառօրյայի ժամանակ մենք լսում էինք հարյուրավոր 18–19 տարեկան քաջ երիտասարդների պատմություններ, անավարտ պատմություններ, ամբողջ ազգով սգում էինք, որովհետև կորուստն անդառնալի էր: Երբ ես տեսնում էի իմ հարազատների, ընկերների կամ թեկուզ անծանոթների ցավը, ինքս էլ ցավում էի ու զգում, որ էստեղ ինչ–որ բան այն չի: Որ մենք՝ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները, ինչ–որ բան սխալ ենք անում: Դու նշեցիր հազարավոր զոհերի, հիմա պատկերացրու, որ մի այդքան մատղաշ կյանք էլ մենք ենք կորցրել: Ուրեմն քանի՜–քանի՜ հազարավոր մարդիկ են զոհվել երկու կողմից էլ, ուղղակի մարդիկ, առանց ազգությանը նայելու: Իսկ ինչե՜ր դեռ կարող էին անել այդ երիտասարդները, ինչքա՜ն լավ ու բարի բաներ, որ էդպես էլ չարեցին…

Ճիշտ ես, մեզ մոտ էլ են ձեզ թշնամի համարում: Համամիտ եմ, որ անտրամաբանական է այս ամենը շարունակելն ու վստահ եմ, որ եթե մեր սերունդը խաղաղության գաղափարը տարածի, մի օր գուցե իմ ու քո երեխաները միասին քննարկեն ինչ–որ տնտեսական համագործակցություն:

Ես չեմ ուզում, որ եղբորս, ապագա ամուսնուս, որդուս, մտերիմ ընկերներիս կամ ինչ–որ ուրիշ մեկի պատմությունն անավարտ մնա: Չեմ ուզում, որ որևէ մեկին ՀԵՏՄԱՀՈՒ հերոսի կոչում տան՝ պատերազմից հետո: Արդեն շատ ունենք հերոսներ, ավելի շատ՝ մահացած հերոսներ: Չեմ ուզում՝ ոչ մի մայր որդեկորույս համարվի, ոչ մի կին այրի մնա, ոչ մի երեխա՝ որբ: Տեսնու՞մ ես, չեմ ասում հայ մայր, հայ երեխա: Չէ՛, թող ձերոնք էլ չզոհվեն, թող ձերոնք էլ խաղաղ ապրեն, թող ժպտան:

Մի քիչ շատ բան եմ չէ՞ ուզում կամակոր երեխայի պես: Բայց մենք պիտի երեխաների պես մտածենք: Եթե հայ ու ադրբեջանցի երեխաներին իրար կողք նստեցնենք, չեն էլ հարցնի՝ դու ո՞վ ես, ի՞նչ ես, չեն ասի՝ դու ուզում ես մեր հողը գրավել կամ հե՛տ տուր մեր տարածքները: Հաստատ չէ, ուղղակի կխաղան իրար հետ ու կծիծաղեն: Հետո գուցե վիճեն, մեկը մյուսի խաղալիքը խլի, բայց վերջում հո՞ կհաշտվեն: Իսկ մենք մի երեխայի պես էլ հաշտվել չենք կարողանում: Ու միմյանց երեսից ժպիտներ ենք խլում…

Երևի պետք է ուղղակի հաճախ խոսենք իրար հետ, իրար երեսի նայենք ու այդ ժամանակ մենք՝ հայերս, կտեսնենք, որ ադրբեջանցին հայից վատ չի ժպտում, իսկ դուք էլ կտեսնեք, որ հայն էլ ամեն դեպքում ժպտալ գիտի: Երբ գնահատենք այդ ժպիտները, արժևորենք ու կարևորենք, էլ չենք համարձակվի ուրիշից խլել…

Ու՜ֆֆ, չգիտեմ, չգիտեմ, շատ եմ չէ՞ խոսում, Սայա՛դ: Եթե դեռ չես ձանձրացել ու կարդում ես, ուրեմն երևի հասկացար, որ այս երկա՜ր– բարա՜կ տեքստով ուզում էի քեզ ասել, որ համաձայն եմ մտքերիդ հետ, համարյա բոլորի: Միշտ չեմ կարողացել կարճ կապել, կներես, որ գլուխդ տանում եմ :D :

Լավ, ինչևէ, երևի էսքանը: Կուզեի՝ դու էլ պատասխանեիր, կուզեի դեռ երկար ինչ–որ բան քննարկել քեզ հետ, բայց եթե նույնիսկ էլ իրար հետ չխոսենք, եթե էդպես էլ իրար չտեսնենք, ուզում եմ՝ հիշես, որ Երևանում երկար–բարակ խոսող, գլուխ տանող, կամակոր, բայց շատ սիրուն ժպիտով մի ծանոթ (կամ ընկեր, ոնց կուզես) ունես, որը քո գաղափարները կիսում ու քեզ պես խաղաղության է սպասում:

Սիրով ու ժպիտով `

Նինա ^–^

Հ.Գ. Դու էլ ժպտա ☺